ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Բիոլոգ. և գյուղատնտ. գիտ. XI, № 9, 1958 Биол. и сельхоз. науки

ՎԻԿՏՈՐ ՀԱՄԱՍՅԱՆԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

(Մնեղյան հիսնամյակի առթիվ)

Սովետական Միությունում, իսկ մի շարք դեպքերում նաև ամբողջ աշխարհում, տեսական աստրոֆիզիկայի և աստղագիտության բուռն զարգացումը անխզելիորեն կապված է Վ. Հ. Համբարձումյանի անվան հետ։ Վ. Հ. Համբարձումյանի ուսումնասիրությունները վերաբերում են ժամանակակից գիտության հանգուցային հարցերին և նպաստել են նրա բարգավաճմանը։ Գիտության ամենաբազմազան բաժիններն (տեսական և գործնական աստրոֆիզիկա, աստղագիտություն, աստղային դինամիկա, տեսական ֆիզիկա, մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ և այլն) ընդգրկող այդ ուսումնասիրությունները սկիզբ դրեցին գիտության մեջ նոր ուղղությունների, որոնք հետագայում բեղմնավոր զարգացում ունեցան իր՝ Վ. Հ. Համբարձումյանի ու Սովետական Միությունում և վերջինիս սահմաններից դուրս նրա բազմաթիվ հետևորդների աշխատանքներում։ Վ. Հ. Համբարձումյանի գիտական հետաքրքրությունների շրջանը նրա աշխատանքներում ներդաշնակորեն զուգորդվում է խոր մտածողության հետ։ Այդ աշխատանքներում դրսևորվում է քննարկվող հարցի բուն էությանը մոտենալու, այն պարզեցնելու և նրա առավել պարզ ու դեղեցիկ լուծումը գտնելու զարմանալի վարպետությունը։

Վ. Հ. Համբարձումյանն առանձնապես աչքի ընկնող տեղ է գրավում ժամանակակից աստղագիտության ասպարեզում։ Նրա «Տեսական աստրոֆիզիկա» աշխատությունը՝ առաջին ռուսերեն ձեռնարկը, հանդիսացավ ժամանակակից տեսական աստրոֆիզիկայի հանրագիտարան և դաստիարակեց երիտասարդ աստրոֆիզիկների մի քանի սերունդներ։

Վ. Հ. Համբարձումյանի գիտական գործունեությունն սկսվել է դեռևս Լենինգրադի համալսարանում, որը նա ավարտել է 1928 թվականին։ Ուսանողության տարիներին նա տպագրում է մոտ տասը անուն գիտական աշխատություններ։ Ասպիրանտուրայում եղած ժամանակ Վ. Հ. Համբարձումյանն զբաղվում է ինչպես աստղագիտությամբ, այնպես էլ մաթեմատիկայով ու տեսական ֆիզիկայով։ Այդ տարիների նրա ուսումնասիրությունների արդյունքը հանդիսացան, մասնավորապես, «Սեփական արժեքների տեսության մի հարցի մասին» աշխատությունը և տեսական ֆիզիկային նվիրված մի շարք աշխատություններ։

1932 թվականին Վ. Հ. Համբարձումյանը հրապարակեց «Մոլորակաձև միգամածության ճառագայթային հավասարակշռությունը», որին հաջորդեցին էներգիայի, դրգռի փոխանցման, ատոմների իոնացման, գազային միգամածություններում «արգելված» գծերի ճառագայթման և այլ հարցերին նվիրված մի շարք ուսումնասիրություններ։

Հետագայում Վ. Հ. Համբարձումյանն զբաղվում է աստղագիտության և կոսմոգոնիայի հարցերով, որտեղ նա քննության է առնում աստղային սիստեմ-

ների պրոբլեմը։ Այդ ուսումնասիրությունները փոխեցին գալակտիկաների հասակի մասին գոյություն ունեցող պատկերացումները։

Աստղային ասոցիացիաների տեսությունը կիրառում գտավ սովետական և արտասահմանյան գիտնականների այն բազմաթիվ աշխատություններում, որոնք նվիրված են աստղային կոսմոգոնիային և գալակտիկայի հետազոտությանը։

Հետագա տարիների ընթացքում Վ. Հ. Համբարձումյանի կատարած աշխատանքները հիմնականում նվիրված են արտաքին գալակտիկաների ուսումնասիրությանը։ Նա հանդել է այն հիմնական եզրակացությանը, որ գալակտիկաների ծագումը խմբային բնույթ ունի։

Վ. Հ. Համբարձումյանն սկսել է զբաղվել նաև ռադիոգալակտիկաների՝ աստրոֆիզիկայում նոր հարցերով և այս բնագավառում ստացել է շատ ինքնատիպ արդյունքներ։

Վ. Հ. Համբարձումյանի գիտական ծառայությունները համընդհանուր ճանաչում են վայելում ամբողջ աշխարհում և արժանացել են բարձր գնահատման։ Նա երեք անգամ պարգևատրվել է ՍՍՌՄ-ի շքանշաններով, երկու անգամ նրան շնորհվել է Ստալինյան մրցանակ։ 1939 թվականին նա ընտրվել է ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1953 թվականին՝ նրա իսկական անդամ։ Վ. Հ. Համբարձումյանն ընտրվել է նաև արտասահմանյան մի շարք ակադեմիաների և գիտական ընկերությունների անդամ։ Նա Ավստրիայի Գիտությունների ակադեմիայի, Գերմանիայի Գիտությունների ակադեմիայի (Բեռլինում), Բելգիայի թագավորական գիտական ընկերության (Լիեժում) թղթակից անդամ է, Ամերիկայի Արվեստների և գիտությունների ակադեմիայի (Բոստոնում) արտասահմանյան պատվավոր անդամ է, Անգլիական թագավորական աստղագիտական ընկերության և Ամերիկյան աստղագիտական ընկերության պատվավոր անդամ։ Գիտական ծառայությունների համար 1956 թվականին նրան շնորհվել է Ֆրանսիական աստղագիտական ընկերության՝ Ժանսենի անվան մեդալ։ 1948 թվականից մինչև 1955 թվականը Վ. Համբարձումյանը եղել է Միջազգային աստղագիտական միության վիցե-պրեզիդենտ։

Վ. Հ. Համբարձումյանը, գիտական ու կազմակերպչական հարցերով խիստ ծանրաբեռնված լինելով հանդերձ, շարունակում է վարել Երևանի պետական համալսարանում աստրոֆիզիկայի ամբիոնը։ Տաղանդավոր գիտնականների երիտասարդ սերնդի նկատմամբ ցուցաբերած իր համբերատար ու հոգատար վերաբերմունքով նա նվաճել է երիտասարդության սերն ու հարգանքը։

Վ. Հ. Համբարձումյանը գիտա-մանկավարժական աշխատանքը հաջող կերպով համատեղում է գիտա-ղեկավար և հասարակական աշխատանքի հետ։ Մի շարք տարիների ընթացքում Լենինգրադի համալսարանում նա եղել է Աստղագիտարանի դիրեկտոր և գիտական մասի գծով պրոռեկտոր։ 1943 թվականից նա վարել է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի առաջին վիցե-պրեզիդենտի պաշտոնը, իսկ 1947 թվականից սկսած նրա պրեզիդենտն է, Բյուրականի աստղադիտարանը հիմնավորելու օրվանից՝ նրա անփոփոխ դիրեկտորը։

Պետք է առանձնապես նշել Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտի պաստում նրա աչքի ընկնող դերը ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների զարգացման, բնական ու տեխնիկական գիտությունների ա-

պարեզում աշխատանքների մակարդակի խիստ բարձրացման, Ակադեմիայում, նոր, ժամանակակից էլեկտրոնիկայի ու ավտոմատիկայի հետ կապված ուղղությունների ստեղծման գործում։

Չի կարելի չնշել նաև Վ. Հ. Համբարձումյանի դերը մեզ մոտ՝ Ակադեմիայում բիոլոգիական գիտությունների տարբեր ուղղությունների զարգացման գործում։

Բիոլոգիական գիտությունների գոյություն ունեցող ուղղությունների (նուրբ օրգանական քիմիա, ֆիզիոլոգիա, միկրոբիոլոգիա, բուսաբանություն, կենդանաբանություն, գենետիկա, ատրոքիմիա, հիդրոբիոլոգիա) զարգացման ու ընդլայնման հետ մեկտեղ, վերջին ժամանակներս Վ. Հ. Համբարձումյանն օգնեց բիոլոգիական գիտությունների բաժանմունքում ստեղծելու և կազմակերպելու նոր ուղղություններ՝ բիոքիմիա և սադիոբիոլոգիա։ Նա մեծ ուշադրություն է նվիրում գիտական կադրերի աճման, լաբորատորիաները նորագույն գիտական սարքավորումներով հագեցնելու գործին։

1947 թվականին Վ. Հ. Համբարձումյանն ընտրվել է Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի անդամ, իսկ 1953 թվականից նա ՍՍՌՄ Գերագույն Սովետի անդամ է։ Վ. Հ. Համբարձումյանը Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի անդամ է 1948 թվականից։

ՍՍՌՄ Գերագույն Սովետի Նախագահության Հրամանագրով, ծննդյան 50 տարին լրանալու կապակցությամբ, գիտական և հասարակական աշխի ընկնող գործունեության համար Վ. Հ. Համբարձումյանը կրկնակի պարգևատրվել է Լենինի շքանշանով։ Մինչ այդ նա պարգևատրվել է նաև Աշխատանքային Կարմիր Դրոշի երկու շքանշանով և մեդալներով։ Կրկնակի արժանացել է Ստալինյան մրցանակի։

Իր ծննդյան հիսնամյակը Վ. Հ. Համբարձումյանը դիմավորում է ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում։